# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ՀՐԱՄԱՆ

№ 47Ը22ն «15» 03 2018 թ.

### ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) գիտական խորհրդի 2016թ. մայիսի 26-ի թիվ 7/5 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարանի դեկանի ընտրության ընթացակարգի» (այսուհետ՝ ընթացակարգ) 6-րդ կետի պահանջները և ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. 2018թ. ապրիլի 17-ին, ընթացակարգի համաձայն, նշանակել և անցկացնել ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկանի ընտրություն:
2. ԵՊՀ գիտական քարտուղարին՝ ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկանի ընտրության վերաբերյալ հայտարարությունն ընտրությունից առնվազն 30 օր առաջ հրապարակել ԵՊՀ ինտերնետային կայքէջում և պատշաճ կարգով կազմակերպել դեկանի թեկնածուների առաջադրման վերաբերյալ փաստաթղթերի ընդունման գործընթացը:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ